ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հայաստանում առկա ներդրումային մեծ պահանջարկի արդյունքում անլուծելի են մնացել տնտեսության առջև ծառացած մի շարք խնդիրներ՝ գործազրկության բարձր մակարդակ, հզորությունների թերբեռնվածություն, արտադրանքի անմրցունակություն և այլն: Մի կողմից՝ դա ենթադրում է և՝ ներքին, և՝ արտաքին հնարավոր ներդրումային աղբյուրների մոբիլիզացում, մյուս կողմից՝ հանրապետությունում օտարերկրյա կապիտալի շարունակական ընդլայնումը և երկարաժամկետ ներկայությունը կարող է անցանկալի հետևանքներ ունենալ երկրի համար ռազմավարական նշանակություն ունեցող ճյուղերի և ոլորտների զարգացման վրա և սպառնալ երկրի տնտեսական անվտանգությանը:

Տնտեսական անվտանգության էությունը կայանում է տնտեսական այնպիսի իրավիճակի ստեղծման մեջ, երբ երաշխավորվում է ազգային շահերի պաշտպանությունը՝ զարգացման թե՝ ներքին, թե՝ արտաքին գործընթացների պայմաններում: Այն ընդգրկում է տնտեսական քաղաքականության սոցիալական ուղղվածության և երկրի բավարար ռազմական ներուժի առկայության ապահովումը: Տնտեսական անվտանգությունը ենթադրում է ոչ միայն տնտեսության զարգացմանը ուղղված ազգային շահերի պաշպանվածությունը, այլ նաև դրանց իրացման մեխանիզմները ստեղծելու իշխանության համակարգի պատրաստակամությունը և կարողությունը, որը պահպանում է հասարակա-քաղաքական կայունությունը երկրում:[1]

Տնտեսական անվտանգության սկզբունքի ապահովումը անհրաժեշտաբար հանդիսանում է ներդրումային քաղաքականության մշակման հիմնաքար: Պետության կողմից որդեգրված, երկրի ներդրումային ոլորտը կարգավորող ցանկացած ռազմավարություն իր հիմքում պետք է ունենա տնտեսական անվտանգությունն ապահովող պայմաններ: Տնտեսական անվտանգության խնդիրներն արդիական են ՀՀ-ում, քանի որ վերջինս, ԽՍՀՄ փլուզումից հետո դառնալով ինքնիշխան պետություն, կառուցում է իր անկախ տնտեսությունը որպես առանձին քաղաքական և տնտեսական միավոր: Ցանկացած երկրի

ներդրումային ռազմավարությունը մշակելիս, որն ուղղվում է ներդրումային ոլորտում հավասարակշռվածության ծեռք բերման, ներդրումային պահանջարկի բավարարման, այդ ոլորտի հարաբերությունների կարգավորման հիմնախնդիրների վերացմանը, անպայման հաշվի են առնվում տվյալ երկրի ազգային շահերն ու նպատակները և դրանց իրացման պայմանները, այսինքն՝ ապահովվում են տնտեսական անվտանգության պահանջները: Տնտեսական անվտանգության ապահովման պայմաններն են գծում այն թույլատրելի սահմանները, որոնց շրջանակներում կարելի է ձևավորել ներդրումային ռազմավարության սկզբունքներն ու ուղղությունները: Այդ թույլատրելի սահմաններից ցանկացած շեղում, նույնիսկ ունենալով ժամանակավոր դրական ներգործություն տնտեսական համակարգի վրա, երկարաժամկետում կարող է բացասաբար ազդել տնտեսության զարգացման վրա: Տնտեսական անվտանգության տեսանկյունից, ներդրումային քաղաքականության մշակման ուղղությունների շրջանակների որոշումը բարդ խնդիր է, որը պահանջում է պարզել ներդրումնային աղբյուրների առաջնահերթության հարցը և տնտեսության որոշակի ոլորտների զարգացման հեռանկարները:

Երկրի ներդրումային ռազմավարության առանցքային հիմնախնդիրներից մեկն է ներդրումային աղբյուրների առաջնահերթության հարցը, որի լուծումը ենթադրում է տնտեսության ինքնուրույնության և արագացված տեմպերով զարգացման համար առավել բարենպաստ պայմանների ապահովում, որը չի սպառնում տնտեսական անվտանգությանը: Տնտեսական արդյունավետությունը և անվտանգությունը հանդիսանում են այն ուղեցույցները, որոնք անհրաժեշտ են ներդրումային աղբյուրների առաջնահերթության որոշումների ընդունման համար:

Հայաստանի համար ներդրումային աղբյուրների ձևավորման ուղղությունների ընտրությունը խիստ սահմանափակ է: Ներքին աղբյուրների փոքրածավալ լինելը, ինչպես նաև դրանք դեպի արտադրություն ուղղելու մեխանիզմների անկատարությունը պատճառ են հանդիսացել՝ տնտեսության առողջացման և հետագա զարգացման համար հիմնվել ներդրումների ֆինանսավորման արտաքին աղբյուների վրա:

ՀՀ ներդրումային քաղաքականությունը ուղղված է օտարերկրյա կապիտալի ներմուծման խթանմանը: ՀՀ-ում կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալները 1999թ. կազմել են 421.36 մլն ԱՄՆ դոլար,

իսկ 2000թ. այդ ցուցանիշն արդեն հասել է 513.10 մլն. ԱՄՆ դոլարի:[2] Թեև օտարերկրյա ներդրումների այս ծավալները խիստ անբավարար են ՀՀ ներդրումային պահանջարկը բավարարելու համար, այնուամենայնիվ, որի ծավալների ընդլայնումը և երկրում երկարաժամկետ օտարերկրյա ներդրումների իրականացումը հղի են արտերկրից տնտեսական կախվածության, ռազմավարական նշանակություն ունեցող ճյուղերում օտարերկրյա մենաշնորհների գոյացման, խոշոր տնտեսությունների կցորդի վերածման, քաղաքական ազդեցության խորացման, տարածքային ամբողջականության կորստի և այլ վտանգներով: Շատ հաճախ, օտարերկրյա մասնավոր կապիտալի չկարգավորված ներհոսքի դեպքում, այն չի լուծում տնտեսության առջև ծառացած ճյուղային և կառուցվածքային հիմնախնդիրները և անբարենպաստ ներգործություն է ունենում տեղական արտադրությունների վրա: Արդիական սարքավորումներով, միջազգային հարուստ փորձով և կառավարման ժամանակակից համակարգերով զինված օտարերկրյա ներդրողները արագ հաղթահարում են տեղական մրցակցությունը և գրավում շուկաները: Դրա բացասական հետևանքներից է ոչ միայն մրցակցությանը չդիմացող և այդ պատճառով փակվող տեղական ձեռնարկությունները, այլ նաև այն հանգամանքը, որ տվյալ ոլորտի զարգացման հեռանկարը որոշվում է արդեն օտարերկրյա ներդրողի կողմից:

Համաշխարհային պրակտիկան վկայում է, որ ամբողջությամբ հրաժարվելը օտարերկրյա կապիտալից, տնտեսական առումով արդյունավետ չէ, քանի որ օտարերկրյա կապիտալը ներմուծող երկրին տալիս է բազմաթիվ առավելություններ: Օրինակ՝ Չինաստանը, երկար տարիներ վարելով «փակ դռների» քաղաքականություն, կանգնել է տնտեսության լճացման փաստի առջև: Դա վկայում է, որ արտերկրից մեկուսացումը անհնար է դարձնում երկրի զարգացումը: Այդ է պատճառը, որ Չինաստանը, չհրաժարվելով տնտեսության զարգացման սոցիալիստական սկզբունքներից, ստեղծել է «բաց» տնտեսական քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ բոլոր պայմանները: Դա առաջին հերթին վերաբերում է օտարերկրյա ներդրումներին, որոնց Չինաստանում օգտագործման հիմնական սկզբունքներն են.

1. Արժեքի օրենքի կիրառման սկզբունքը
2. Հավասարության և փոխշահավետ համագործակցության սկզբունք
3. Ազգային առավելությունների հայտնաբերում և օգտագործում

4. Օտարերկրյա ներդրումների օգտագործումը, որպես սոցիալիստական տնտեսության կարևոր լրացում

5. Օտարերկրյա ներդրումների լիովին և արդյունավետ օգտագործման սկզբունք:

Այս սկզբունքների հավաստիության և գիտական հիմնավորվածության մասին վկայում է Չինաստանի ավելի քան 20-ամյա փորձը:[3]

Օտարերկրյա մասնավոր կապիտալը ներդրումների ֆինանսավորման արտաքին աղբյուրներից է և ընդգրկում է ինչպես անհատ ներդրողներին, այպես էլ ձեռնարկություններին: Այն կարող է լինել ուղղակի և պորտֆելային: Ուղղակի երբ օտարերկրյա կապտալը ներդրվում է կոնկրետ և որոշակի գործունեության մեջ և ներդրողը ունի 10%-ից ավել մասնաբաժին (ըստ Միջազգային արժութային հիմնադրամի (IMF) և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) չափանիշների): Իսկ պորտֆելայինը երբ ներդրումը կատարվում է ձեռք բերելով ձեռնարկության արժեթղթերի և պարտատոմսերի մինչև 10%-ը որոշակի եկամտաբերության ակնկալիքով:

Արտասահմանյան ներդրումների կառուցվածքի և հոսքերի ուղղությունների փոփոխությունները, ինչպես նաև ծավալների ընդլայնումը կարևորում է օտարերկրյա ներդրումների արդյունավետության խնդրի արդիականությունը: Ուսումնասիրողների մոտ ձևավորվել են տարբեր իրարամերժ կարծիքներ կապված օտարերկրյա մասնավոր կապիտալի հնարավոր դրական կամ բացասական ազդեցության վերաբերյալ: Օգտագործելով արտերկրյա կապիտալը յուրաքանչյուր երկիր ձգտում է զարգացնել սեփական անկախ տնտեսությունը: Այդ դիրքորոշման հետ կապված առաջանում է հիմնախնդիր՝ տնտեսությունը օտարերկրյա ազդեցությունից զերծ պահելու ռազմավարության և զարգացման համար անհրաժեշտ արտասահմանյան կապիտալ ներգրավելու քաղաքականության միջև: Դրա լուծումը ենթադրում է տնտեսության մեջ օտարերկրյա կապիտալի սահմանափակ ծավալների առկայություն, որը ապահովում է օպտիմալ արդյունավետություն: Զարգացած շուկայական երկրներում այդ չափաբաժինը տատանվում է ազգային հարստության 20ից 30%-ի սահմաններում:

Որոշ երկրներ կիրառում են օտարերկրյա մասնավոր կապիտալ ներգրավելու համար հատուկ շարժառիթներ (հարկային արձակուրդներ,

ազատումներ ներմուծման մաքսատուրքերից, վարկային երաշխիքների տրամադրում և այլն): Օտարերկրյա ներդրումները նպաստում են արտադրողականության և զբաղվածության արագ աճին, տեխնոլոգիաների զարգացմանը և միջազգային մրցանակության բարձրացմանը: Օտարերկրյա կապիտալը հաճախ փրկում է ակտիվները անգործ վիճակում մնալուց: Արտասահմանյան ներդրումներով ձեռնարկությունները հաճախ ունենում են արդյունավետության բարձր աստիճան, և դրանց կատարած տեխնիկական նորամուծությունները տարածվում են ամբողջ տնտեսության մեջ: Օտարերկրյա ֆիրմաները սովորաբար բարձրացնում են շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության և անվտանգության, ինչպես նաև աշխատուժի սոցիալական ապահովության չափանիշները:

Շատերը խուսափում են օտարերկրյա կապիտալից դրանում տեսնելով կապիտալ ընդունող երկիրը ազդեցության տակ գցելու վտանգ: Շատ քննադատներ անհանգստանում են ներդրումների վերահսկողությունը արտասահմանից ապահովվելու համար: Նման մտահոգության պատճառն այն է, որ միջազգային ընկերության որոշումները ընդունվում են հեռվից, առանց հաշվի առնելու ազգային շահերը և ելակետ ընդունելով «ծագման» երկրի գլոբալ և նվաճողական նպատակները: Օտարերկրյա ներդրումների բացասական դրսևորումներից է տեղական մրցակցության վրա նրանց ունեցած ազդեցությունը: Արտասահմանյան ֆիրմաները, մրցակցելով տեղականների հետ, կարող են շատ բնագավառներում գերազանցել նրանց: Օտարերկրյա ներդրողների գերարդյունավետ արտադրության հետևանքով տեղական ֆիրմաները կարող են կորցնել իրենց շահույթի այն մասը, որը նրանք կստանային հովանավորված ներքին շուկայում:

Հարց է նաև այն, թե արդյոք օտարերկրյա ներդրումների հետևանքով ստեղծված աշխատատեղերի քանակը ավելի կլինի, քան մրցակցությանը չդիմանալու հետևանքով փակված տեղական ձեռնարկություններում աշխատանքը կորցրածների թիվը:

Օտարերկրյա մասնաճյուղ ունեցող ֆիրմաները ռեցեպիենտ (կապիտալ ներմուծող) երկրներում գրեթե չեն զբաղվում գիտահետազոտական աշխատանքներով և ծրագրերով: Ներդրողները խուսափում են նաև արտասահմանում գերժամանակակից ապրանքատեսակների արտադրություն ծավալելուց: Ավելին շատ երկրներ իրենց գաղութատիրական նպատակները

իրացնում են իրենց ընկերությունների միջոցով՝ վերահսկողություն սահմանելով զարգացող երկրների տնտեսության կենսականորեն հույժ կարևոր հատվածների (սեկտորների) վրա: Նման պայմաններում գտնվող ընկերությունները կարող են ցածր գին սահմանել իրենց երկրի համար, խանգարել տեղական արտադրության զարգացմանը և թելադրել արտադրության կազմակերպման սեփական պայմանները: Ռեսուրսների նկատմամբ վերահսկողություն սահմանելու ընթացքում արդյունաբերապես զարգացած երկրները ձեռք են բերում նաև քաղաքական մեծ ազդեցություն ունեցող լծակներ:

Օտարերկրյա մասնավոր կապիտալը դոնոր (կապիտալ արտահանող) երկրից ռեցեպիենտ երկիր ուղղվելու հիմնական և գլխավոր պատճառը շահույթի ապահովումն է: Երբեմն պետությունները քաղաքական նկատառումներով իրենց երկրի մասնավոր կապիտալը ուղղորդում են այլ երկիր կիրառելով խթանող միջոցառումներ (հարկային արտոնություններ, պաշտպանության ապահովում և այլն), սակայն մասնավոր կապիտալի համար գլխավոր շարժառիթը մնում է առավելագույն շահույթի ստացումը:

Այսպիսով, օտարերկրյա մասնավոր կապիտալի բնորոշ հատկանիշն է.

Առավելագույն շահույթի ստացում (շուկայի մեծության, զարգացած ինֆրակառուցվածքի և էժան աշխատուժի պայման) կապիտալի և եկամտի վերադարձվելիության պայմանով (ցածր ռիսկայնություն):

ՀՀ-ում ներքին և արտաքին ներդրումային աղբյուրների կողմից կատարվող ներդրումների հնարավոր ներգործությունը քննարկելիս, առաջնահերթությունը կարելի է տալ առաջինին: Օտարերկրյա ներդրումների խթանման քաղաքականության հետ մեկտեղ կարելի է տնտեսական լծակներն ուղղել ներքին ներդրումային ռեսուրսների ընդլայնմանն ու «խնայող - արտադրող» կամ ներդրումային առաջարկ և պահանջարկ ներկայացնող կողմերը իրար հետ կապող հաստատությունների կայացմանը, քանի որ հանրապետության ներդրումային ներքին աղբյուրների աննշան ծավալների պատճառներից մեկն էլ հանդիսանում է կապիտալի արտահոսքը երկրից: Այստեղ մեծ տեղ է վերապահվում պետությանը, որպես խոշոր ներդրումային որոշումներ ընդունող, քանի որ նման որոշումները սերտորեն առնչվում են տնտեսական անվտանգության խնդիրների հետ: Անորոշության և ռիսկի բարձր աստիճանի պայմաններում պետությունը պետք է իրականացնի համատեղ ներդրումային ծրագրեր և տեղական, և արտասահմանյան ընկերությունների հետ՝ բաժնե-

մասային և գործընկերային հիմունքներով: Ներդրողների համար առանձնահատուկ նշանակություն ունի իրենց միջոցների վերադարձման երաշխիքները, ներդրումային միջավայրի կայունությունը, ինչպես նաև կատարվող ներդրումների ծավալների մեծությունները: Պետության մասնակցությունը ներդրումային ծրագրին էականորեն բարձրացնում է ներդրողների վստահությունը ներդրումային միջավայրի նկատմամբ և ներդրումների ետ վերադարձն ապահովող լրացուցիչ երաշխիքներ է ստեղծում:

Տնտեսական անվտանգության տեսանկյունից առաջնահերթություն պետք է տրվի այն ոլորտների օժանդակությանը, որոնք ռազմավարական նշանակություն ունեն պետության համար և ապահովում են տնտեսության արագընթաց զարգացման տեմպեր: Ներդրումային քաղաքականության միջոցով պետական հովանավորության կարիք են զգում հետևյալ ոլորտները.

- Ներմուծումը փոխարինող արտադրությունները, որոնք ավանդական արտադրատնտեսական կապերի վերացման հետևանքով գտնվում են ծանր ֆինանսական կացության մեջ:
- Արտաքին շուկաներ կողմնորոշում ունեցող ճյուղերը, որի հետևանքով հնարավոր կլինի մեղմել երկրի ընթացիկ գործարքների հաշվի բացասական մնացորդը:
- Ժամանակակից և մրցունակ արտադրությունները, որոնց ապրանքները շուկայում մեծ պահանջարկ են վայելում:
- Նորամուծությունները և գիտական հայտնագործությունները, որոնք հիմք են հանդիսանում տնտեսության մրցունակության բարձրացման, տնտեսական աճի և տնտեսական անվտանգության ապահովման համար:

---

1. „Экономическая безопасность"., под ред. Сенгечова В. К., „Финстатинформ", М., 1998, стр 12.

2. «ՀՀ միջազգային ներդրումային դիրքը, 1997-2000», ՀՀ ազգ. վիճ. ծառայություն, էջ 8:

3 Мяо Хуащао, „Использование иностранного капитала в Китае", "Проблемы теории и практики управления", 1/2001.